ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.10.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/52

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.09.2017թ. թիվ 04/26-3/17662-17 գրությամբ «Ինվուդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00904053) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 23.09.2017թ. թիվ 01/61-19777 գրության հիման վրա, 29.09.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Ինվուդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը 23.09.2017թ. թիվ 01/61-19777 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ–ԳՀԱՊՁԲ–17/4» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցել է «Ինվուդ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն): Ընկերության «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարն եղել է զրո:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովի կողմից մեկ աշխատանքային օրով կասեցվել է նիստը և էլեկտրոնային եղանակով ծանուցվել Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերոնշյալ անհամապատասխանությունը: Ընկերության կողմից սահմանված ժամկետում չի շտկվել առկա նահամապատասխանությունը, և համաձայն Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Նարինե Կիրակոսյանը:

3. **<u>«Ինվուդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ինվուդ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 21.08.2017թ. ներկայացրել էր բողոք, որով հայտնել էր հետևյալը.

««Ինվուդ» ՍՊԸ-ն մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետև՝ Ընթացակարգ):

Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. օգոստոսի 3-ին ժամը 11:45-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Ինվուդ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար (համապատասխանում է ընթացակարգի հարվերով սահմանված պահանաջներին), իսկ 3-րդ կետի համաձայն՝ «Ինվուդ» ՍՊԸ-ն ճանաչվել է 9-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Երևանի քաղաքապետարանի կողմից 14.08.2017թ.-ին Ընկերությանը բանավոր տեղեկացրել են, որ մեր հայտը մերժվել է՝ չներկայացնելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի տվյալ արձանագրությունը»:

Որպես բողոքի իրավական հիմքեր և հիմնավորումներ՝ Ընկերությունը նշել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի (ուժի մեջ է մտել 25.04.2017թ., այսուհետ՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով հայտնել է, որ «Ինվուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է ընթացակարգի հրավերի պահանջներին և խնդրել է դադարեցնել «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Ինվուդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Խորհրդի նիստերին մասնակցում էր «Ինվուդ» ՍՊԸ-ի տնօրեն Արմեն Ժամկոչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/52 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.09.2017թ. թիվ 04/26-3/17662-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանը 23.09.2017թ. թիվ 01/61-19777 գրությունը, «ԵՔ–ԳՀԱՊՁԲ–17/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԵՔ–ԳՀԱՊՁԲ–17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.07.2017թ. նիստի թիվ 2, 27.07.2017թ. նիստի թիվ 3, 03.08.2017թ. նիստի թիվ 4, 09.08.2017թ. նիստի թիվ 5, և 11.08.2017թ. նիստի թիվ 6 արձանագրությունները, «Ինվուդ» ՍՊԸ-ի կողմից

ընթացակարգին ներկայացված հայտը, ՀՀ ԿԱ ՊԵԿ (այսուհետ՝ նաև Կոմիտե) կողմից տրամադրած եզրակացությունը, Կոմիտեի կողմից «Ինվուդ» ՍՊԸ-ին տրամադրած՝ ավելացված արժեքի հարկի հաշվարկը, «Ինվուդ» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը.

Խորհուրդը՝ քննելով «Ինվուդ» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. ներկայացված բողոքը, 11.09.2017թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/33 որոշմամբ «Ինվուդ» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. ներկայացրած բողոքը մերժել է:

Խորհրդի ԳԲԽ-ԷՍ-2017/33 որոշմամբ արձանագրվել է հետևյալը.

«Երևանի հհ. 26,70, 91, 114, 160 մանկապարտեզների համար գույքի ձեռքբերման նպատակով՝ Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵՔ–ԳՀԱՊՁԲ–17/4» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մի շարք չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ինվուդ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 27.07.2017թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ «Ինվուդ» ՍՊԸ-ն 9-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղն զբաղեցրած մասնակից՝ ներկայացնելով նշված չափաբաժնի համար նվազագույն գնային առաջարկը, որը կազմել է 2.599.200 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը, որոշել է գնման ընթացակարգի բոլոր չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող՝ հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 28.07.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ի պատասխան հանձնաժողովի 28.07.2017թ. Կոմիտեին ներկայացված հարցմանը՝ վերջինս 01.08.2017թ. ներկայացրել է հարցման վերաբերյալ եզրակացություն, ըստ որի «Ինվուդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 0 (զրո) ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 03.08.2017թ. ժամը 11:45-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով Հանձանժողովն արձանագրել է, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

Նույն արձանագրության 3-րդ կետով Հանձնաժողովը որոշել է «Ինվուդ» ՍՊԸ-ն 9-րդ չափաբաժնի մասով ճանաչվել ընտրված մասնակից:

Հանձնաժողովի 09.08.2017թ. ժամը 11:45-ին գումարել է արտահերթ նիստ, որի արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ տեխնիկական վրիպակի արդյունքում մասնակիցներից «Ինվուդ» ՍՊԸ-ն 9-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, մինչդեռ մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման վերաբերյալ եզրակացության համաձայն՝ մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշել է ծանուցել «Ինվուդ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը 11.08.2017թ. ժամը 11:45-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով Հանձանժողովն արձանագրել է, որ «ԵՔ–ԳՀԱՊՁԲ–17/4» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Ինվուդ» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող անհամապատասխանությունը հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել, և նույն արձանագրության 1.2 կետով որոշել է, որ «Ինվուդ» ՍՊԸ-ի հայտը ենթակա է մերժման:

«Ինվուդ» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ տեղեկացել է

բանավոր՝ չստանալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտը մերժելու մասին արձանագրությունը: Միաժամանակ, Ընկերությունը գտնում է, որ իր կողմից ներկայացված հայտը համապատասխանել է ընթացակարգի հրավերի պահանջներին:

Բողոքի քննության նպատակով 04.09.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը ընդունեց այն փաստը, որ հանձնաժողովի կողմից թույլ տրված վրիպակի արդյունքում «Ինվուդ» ՍՊԸ-ն 9-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, մինչդեռ Ընկերության «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի եզրակացության համաձայն՝ նշված որակավորման չափանիշը չի համապատասխանել հրավերի պահանջներին, հետևաբար, Հանձնաժողովը՝ շտկելով իր կողմից թույլ տրված վրիպումը, 09.08.2017թ. գումարել է հանձնաժողովի արտահերթ նիստ, որի արձանագրության 1.1 կետով արձանագրել է Ընկերության հայտում առկա անհամապատասխանությունը՝ առաջարկելով մեկ աշխատանքնային օրվա ընթացքում շտկել այն:

Միաժամանակ, բողոքաբերի այն դիտարկմանը, որ հայտը մերժելու վերաբերյալ վերջինս տեղեկացվել է բանավոր և չի ստացել Ընկերության հայտը մերժելու մասին հանձնաժողովի համապատասխան արձանագրությունները, Պատվիրատուի ներկայացուցիչը նշեց, որ ծանուցումներն Ընկերությանն իրականացվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, և Խորհրդին ներկայացրեց նշված արձանագրությունների ծանուցումը հավաստող՝ էլեկտրոնային կայքից արտատպված պատճենները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

• 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

«ԵՔ–ԳՀԱՊՁԲ–17/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2.5 կետի՝ 3-րդ ենթակետի համաձայն՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝ Հայաստանի Հանրապետության

ռեզիդենտ հանդիսացող մասնակցի, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտը ներկայացնելուն նախորդող՝

- երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը չպետք է պակաս լինի նույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից.

- հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չպետք է գերազանցի ակտիվների հաշվեկշռային արժեքը(...):

Որպես Հրավերով նախատեսված «ֆինանսական միջոցներ» չափանիշը հիմնավորող փաստաթղթի շտկված տարբերակ Ընկերությունը Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 5 բաժնի կողմից հաստատված 2017թ. 2-րդ եռամսյակի ավելացված արժեքի հարկի ճշգրտված հաշվարկը, որի համաձայն՝ Ընկերության ընդամենը շրջանառությունը (համախառն եկամտի ծավալը) նշված հաշվետու ժամանակահատվածում կազմել է 11.382.500 ՀՀ դրամ:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվետու տարին տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանն է:

Այսինքն, ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 5-րդ բաժնի կողմից հաստատված 2017թ. 2-րդ եռամսյակի ավելացված արժեքի հարկի ճշգրտված հաշվարկը, որի համաձայն Ընկերության ընդամենը շրջանառությունը (համախառն եկամտի ծավալը) նշված հաշվետու ժամանակահատվածում կազմել է 11.382.500 ՀՀ դրամ, չի ընդգրկում հայտը ներկայացնելուն նախորոդող երեք հաշվետու տարիները:

Խորհուրդն արձանագրում է, որ «Ինվուդ» ՍՊԸ-ի հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմել է 0 (զրո) ՀՀ դրամ, ինչը չի համապատասխանում «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պահանջին:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ընկերության հայտը մերժելու մասին հանձնաժողովի համապատասխան արձանագրությունները Պատվիրատուի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով ծանուցվել են Ընկերությանը:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

•1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

•2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ գանահատող հանձնաժողովը՝ անբավարար գնահատելով «Ինվուդ» ՍՊԸ-ի հայտը՝ գործել է իրավաչափ»:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N3 հավելվածով՝ որոկավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:
- 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը, նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, որի արդյունքում խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իր իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողություններն, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ, ինչպես նաև Հրավերի 2.5 կետի 3-րդ ենթակետի 1-ին պարբերությամբ սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով և 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.09.2017թ. թիվ 04/26-3/17662-17 գրությամբ «Ինվուդ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 00904053) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Ինվուդ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**